«FastTrack International» ակցիայի կանոններ

Սահմանումներ և բացատրություններ

Fast-track – հատուկ ծառայություն, որը անձին հնարավորություն է տալիս նվազագույն ժամանակում և առավելագույն հարմարավետությամբ, խուսափելով հերթերից, Օդանավակայանում անցնել բոլոր ֆորմալ գործընթացները:

QR ծածկագիր – հատուկ գրաֆիկական ծածկագիր Ծառայություն ստանալու համար, որը տրամադրվում է Ակցիայի Մասնակցին Չատ-բոտում՝ սույն Կանոնների դրույթների համաձայն:

Օդանավակայան – Ստամբուլի օդանավակայան (IST), Թուրքիա, Լարնակայի օդանավակայան (LCA) Կիպրոսի Հանրապետություն; Միլան Մալպենսա (MXP) և Միլան-Բերգամո (BGY), Իտալիա; Հռոմ-Ֆյումիչինո (FCO) և Հռոմ-Չամպինո (CIA), Իտալիա; Բարսելոնա (BCN), Իսպանիա; Գրան-Կանարիա (LPA), Պալմա (PMI), Ալիկանտե (ALC), Վալենսիա (VLC), Մալագա (AGP), Իսպանիա և այլ օդանավակայաններ, որոնց սպառիչ ցանկը գտնվում է Չատ-բոտում:

Ակցիա – «FastTrack International» գովազդային ակցիա:

Բանկ – իրավաբանական անձ, որը գործող բանկային արտոնագրի հիման վրա բացառիկ իրավունք ունի մատուցել բանկային ծառայություն Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի Հանրապետության, Բելարուսի Հանրապետության, Թաջիքստանի Հանրապետության, Ուզբեքստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության կամ Մոլդովային Հանրապետության տարածքում:

Նույնականացման սարք – Օդանավակայանում տեղադրված հատուկ տեխնիկական սարք, որը հնարավորություն է տալիս կարդալ QR-ծածկագիրը՝ Ակցիայի մանսակցին սույն Կանոնների պայմաններին համապատասխան Ծառայություններ տրամադրելու նպատակով:

Պատվիրատու – «Վիզա Ինթերնեշնլ Սերվիս Ասոսիեյշն», որը գտնվում է հետևյալ հասցեում. ԱՄՆ, CA 94404 – 2775, ք. Ֆոսթեր-Սիթի, Մեթրո Սենթըր բուլվար, 900:

Քարտեր – Բանկի կողմից թողարկած Visa Platinum, Visa Signature և Visa Infinite, Visa Platinum Business, Visa Signature Business քարտեր, որոնք Ակցիայի Մասնակցին Ակցիային մասնակցելու իրավունք են տալիս:

Մեսենջեր – ակնթարթային հաղորդագրություններով և տեսանյութերով փոխանակվելու համար նախատեսված հավելված, մասնավորապես՝ Viber, Telegram:

Կազմակերպիչ – «ԻՆՖՈԿՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, իրավաբանական անձի նույնականացման համար՝ 36563986, գտնվելու վայրը՝ Ուկրաինա, 01023, ք. Կիև, Սպորտիվնայա հրապարակ, շենք 1. A:

Գործընկեր – «ՌԵՆՈՎԱՑԻՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, իրավաբանական անձի նույնականացման համար՝ 38876589, գտնվելու վայրը՝ Ուկրաինա, 61099, ք. Խարկով, Ենակիևսկայա փողոց, շենք 11-A:

Ծառայություն – Fast-track կատեգորիայի ծառայություն (ժամանման և մեկնման), որը տրամադրվում է Ակցիայի մասնակիցներին Օդանավակայանում: Այդպիսի ծառայությունը հանդիսանում է նվեր Ակցիայի Մասնակցին:

Կանոններ – Ակցիայի ներկայիս կանոններ:

Ակցիայի գործողության ժամկետ – 09.07.2021 թվականի ժ.00:00:01-ից մինչև 30.09.2024 թվականի ժ. 23:59:59-ը:

Ակցիայի մասնակիցներ – քարտապան հանդիսացող ֆիզիկական անձիք, որոնք սույն Կանոնների դրույթների համաձայն իրավունք ունեն մասնակցել Ակցիային: Բոլոր մասնակիցներին տրամադրվող Ծառայությունը նույնն է: Տվյալ դեպքում տարբերությունը պայմանավորվում է միայն քարտապանների ունեցած Քարտերով:

Չատ-բոտ – “Visa Ukraine” և “Visa Concierge” չատ-բոտ, որը կարելի է գտնել https://mssg.me/service_concierge կամ https://mssg.me/concierge__service հղումով և որը ներառված է Մեսենջերների մեջ:

1. Ակցիայի մասնակիցների՝ Ակցիային մասնակցելու կարգը

1.1. Ակցիային մասնակցելու նպատակներով, այն անձը, որը ցանկություն ունի մասնակցելու Ակցիային և դառնալ Ակցիայի Մասնակից, պետք է Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում կատարի հետևյալ գործողությունները.

1.1.1. լինել գործող քարտապան;

1.1.2. գրանցվել կամ արդեն գրանցված լինել Չատ-բոտում՝ գրանցման ներքին մեխանիկայի համաձայն, որը պարունակվում է Չատ-բոտում;

1.1.3. Չատ-բոտի գլխավոր մենյույում սեղմել «FastTrack International» կոճակը;

1.1.4. ծանոթանալ Ակցիայի տվյալներին և սույն Կանոններին՝ սեղմելով Չատ-բոտի գլխավոր մենյուի «FastTrack International» կոճակը;

1.1.5. ստուգել ծառայության հասանելիությունն ու ընտրել երկիրն ու օդանավակայանը;

1.1.6. սեղմել «ստանալ վաուչեր/get a voucher» կոճակը;

1.1.7. ընտրել թռիչքի՝ առաջարկվող տեսակներից որևէ մեկը՝ Domestic Departure, International Departure կամ International Arrival;

1.1.8. Չատ-բոտում տրամադրել չվերթի համարը, ամսաթիվը և ժամը, անուն-ազգանունը (տոմսի համաձայն), հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե;

1.2. Սույն Կանոնների 1.1.1. - 1.1.8. կետերի հաջող ավարտի դեպքում, անձը դառնում է Ակցիայի Մասնակից և Չատ-բոտում ստանում QR-ծածկագիր պարունակող ֆայլ;

1.3. Սույն Կանոնները հանդիսանում են այն հիմնական փաստաթուղթը, որով կարգավորվում են Ակցիայի Մասնակցի և Կազմակերպչի/Պատվիրատուի/Գործընկերոջ պաշտոնական փոխհարաբերությունները: Ակցիայի մասնակցի կողմից սույն Կանոնների դրույթների ակցեպտը իրականացվում է սույն Կանոնների 1.1.1.-1.1.8. կետերում նշված գործողությունների հաջորդաբար կատարման եղանակով:

1.4. Ակցիայի Մասնակիցը ակցեպտը իրականացնում է կամավոր՝ ինչն իրենից ներկայացնում է սույն Կանոնների դրույթների համաձայն գրավոր պայմանագրի կնքում:

1.5. Կանոնների մասնակի ակցեպտը թույլատրելի չէ:

1.6. Քարտը պետք է վավեր լինի ավիատոմսի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

2. QR-ծածկագրի կիրառման առանձնահատկությունները

2.1. Ծառայությունը կարելի է պատվիրել տարվա ցանկացած ամսաթվի համար: QR-ծածկագիրը վավեր է ծառայությունը պատվիրելու օրվա դրությամբ, սակայն առնչվում է այն չվերթին, որը նշված է Կանոնների 1.1.7. և 1.1.8. կետերում:

2.2. QR-ծածկագիրը տրամադրվում է Ակցիայի Մասնակիցներին՝ հետևյալ սահմանափակումներով.

2.2.1. Ակցիայի Մասնակից հանդիսացող Visa Platinum, Visa Platinum Business քարտապանների համար Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում ոչ ավել, քան 2 (երկու) QR-ծածկագիր;

2.2.2. Ակցիայի Մասնակից հանդիսացող Visa Signature, Visa Signature Business քարտապանների համար Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում ոչ ավել, քան 10 (տասը) QR-ծածկագիր;

2.2.3. Ակցիայի Մասնակից հանդիսացող Visa Infinite, Visa Infinite Business քարտապաններին տրամադրվում է այն քանակությամբ QR-ծածկագիր, որքան անհրաժեշտ է Ակցիայի Մասնակից հանդիսացող Visa Infinite քարտապանին:

2.3. QR-ծածկագիրը Ակցիայի Մասնակիցը կարող է օգտագործել բացառապես սեփական նպատակներով, ինչպես նաև կարող է փոխանցել երրորդ անձանց:

2.4. Ակցիայի գործողության ժամկետում չօգտագործված QR-ծածկագիրը չի տեղափոխվում այլ ամսաթվի, չի կուտակվում, չի ավելացվում և ենթակա չէ դրամական կամ այլ տեսակի փոխհատուցման:

2.5. QR-ծածկագիրը պարունակող ֆայլում առկա է «արագ արձագանքման» ֆունկցիան, որը թույլ է տալիս կապվել Գործընկերոջ տեխնիկական օժանդակման թիմի հետ, եթե խնդիրներ են ծագել QR-ծածկագրի աշխատանքի հետ:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1. Ակցիայի Մասնակիցը գործող օրենսդրության շրջանակներում պատասխանատավություն է կրում իր տրամադրած տվյալների և Քարտի օգտագործման իրավունքի համար:

3.2. Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների մուծումը իրականացնում է այն անձը, որի վրա այդ պարտականությունը դրված է գործող օրենսդրության դրույթներով:

3.3. Կազմակերպիչը/Պատվիրատուն/Գործընկերը պատասխանատվություն չեն կրում, եթե Ակցիայի Մասնակիցը իրենցից անկախ պատճառներով հնարավորություն չունի օգտվել QR-ծածկագրից, այդ թվում, բայց ոչ բացառապես, Նույնականացման սարքի անսարքության, չվերթի չեղարկման, տեղափոխման կամ ուշացման, Օդանավակայանի աշխատանքում փոփոխությունների, Ակցիայի Մասնակցի կողմից գործող օրենսդրության դրույթների խախտման և այլ պատճառներով:

4. Անձնական տվյալների մշակում

4.1. Ակցիայի շրջանակներում, Ակցիայի Մասնակիցը, սույն Կանոնների դրույթներով կնքված պայմանագրի հիման վրա, ինչը հանդիսանում է առանձին հիմք իր անձնական տվյալների մշակման համար, Կազմակերպչին տրամադրում է հետևյալ անձնական տվյալները.անգլերենով շարադրված անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսհամար և էլեկտրոնային փոստի հասցե: Տվյալների մշակման սույն կանոնները հանդիսանում են Չատ-բոտում պարունակվող՝ տվյալների մշակման կաննոների մաս:

4.2. 4.1 կետում հիշատակված անհատական տվյալները մշակվում են Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում՝ Ակցիայի Մասնակցի՝ Ակցիային մասնակցելու իրավունքը ապահովելու համար: Նման անհատական տվյալները կհավաքվեն, կմշակվեն, կփոխանցվեն (Կազմակերպչի և Գործընկերոջ արտասահմանյան սերվերներին) սույն Կանոնների դրույթների կատարման նպատակով: Կազմակերպիչը հանդիսանում է նման անհատական տվյալների սեփականատերն ու տիրապետողը: Գործընկերն ունի անհատական տվյալների հետ աշխատանքի սեփական քաղաքականություն, սակայն ցանկացած պարագայում նման տվյալները չեն կարող մշակվել սույն Կանոնների դրույթներին հակառակ: Գործընկերոջ՝ տվյալների մշակման քաղաքականությանը Ակցիայի Մասնակիցը կարող է ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://highpass.aero/Home/PrivacyPolicy:

4.3. Կանոնների 1.1. կետում նշված գործողությունները կատարելով՝ Ակցիայի Մասնակիցը համաձայություն է տալիս իր անձնական տվյալների մշակման նկարագրված կարգին, ինչպես նաև հաստատում է, որ ծանոթացել է բոլոր այն իրավունքներին, որոնք իրեն տրված են գործող օրենսդրությամբ:

5. Այլ դրույթներ

5.1. Կազմակերպիչը իրավունք ունի ներգրավել երրորդ անձանց՝ Ակցիայի Կանոնների շրջանակներում իր պարտավորությունները կատարելու նպատակով:

5.2. Սույն Կանոնների ոչ միանշանակ մեկնաբանություն ենթադրող իրավիճակների, ցանկացած վիճելի հարցերի և/կամ Կանոններով չկարգավորվող հարցերի առաջացման դեպքում, նման հարցերի լուծումը Ակցիայի Կազմակերպիչը/Պատվիրատուն վերապահում է իրեն: Կազմակերպչի/Պատվիրատուի նման որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

5.3. Ակցիայի գործողության ժամկետը կարող է փոփոխվել կամ Ակցիան կարող է վաղաժամ դադարեցվել Պատվիրատուի և Կազմակերպչի փոխադարձ համաձայնությամբ: Ակցիայի գործողության ժամկետի փոփոխությունը կամ դրա վաղաժամ դադարեցումը հնարավոր են Չատ-բոտում այդ մասին տեղեկացնելու պարագայում:

5.4. Սույն Կանոնները և դրանց փոփոխությունները ծանոթանալու նպատակով տեղադրված են Չատ-բոտում:

5.5. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում փոփոխություններ կատարել գործող Կանոններում Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում: